Հայրենյաց

Վարչական ղեկավար՝ Գևորգ Մարտիրոսյան

Հեռ: 093 33 60 89

Մակերես՝ 14.2կմ²

Բնակչություն՝ 750

Ինդեքս՝ 3013

ripsime.abrahamjan84@mail.ru

Հայրենյացը գտնվում է Արթիկի տարածաշրջանում, Արթիկից 9 կմ արևմուտք, մարզկենտրոն Գյումրուց գտնվում է 20 կմ հեռավորության վրա: Նախկինում ունեցել է Սանգյառ,Սոնգյուռլի,Սունգուռլի անվանումները: Հայրենյաց անվանվել է 1946թ-ից:

Նախկինում մտել է Երևանի նահանգի Ալեքսանդրապոլի գավառի մեջ: Հայրենյացը տեղադրված է հարթավայրում՝ ծովի մակարդակից 1600մ բարձրության վրա: Կլիման բարեխառն լեռնային է, ձմեռը՝ տևական, ցուրտ, հաստատուն ձնածածկույթով, ամառը՝ տաք, համեմատաբար խոնավ: Տարեկան տեղումների քանակը՝ 500-600 մմ: Բնական լանդշաֆտները սևահողային լեռնատափաստաններ են: Հայրենյացի բնակչության նախնիների մի մասը գաղթել են Արևմտյան Հայաստանի Բասենի, Մուշի, Կարսի շրջաններից: Ունի դպրոց՝ հիմնադրված 1859թ-ին, գրադարան, բուժկետ, կապի հանգույց: Գյուղատնտեսական հողահանդակները գրեթե ամբողջությամբ օգտագործվում են որպես վարելահողեր՝ կազմելով 613հա: Պետական հողերը գլխավորապես օգտագործվում են որպես վարելահողեր, արոտավայրեր՝ կազմելով համապատասխանաբար 83 և 587 հա: Գյուղատնտեսության մասնագիտացման հիմնական ուղղությունը հողագործությունն է Զբաղվում են հացահատիկային, բանջարաբոստանային կուլտուրաների մշակությամբ, բացի այդ, նաև, խոշոր եղջերավոր անասնապահությամբ և մեղվապահությամբ: Համայնքի հիմնախնդիրների մեջ կարևորվում են գյուղամիջյան ճանապարհների վերանորոգումը, գյուղատնտեսական մթերքի իրացումը, գազաֆիկացումը, խմելու ջրագծերի նորոգումը, դպրոցական գույքի նորացումը: